Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Մեծամոր 08 հոկտեմբերի 2024թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-118/24» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար աթոռների, բազկաթոռների և գրասեղանների ձեռքբերման նպատակով սույն թվականի հուլիսի 22-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-118/24» ծածկագրով գնման ընթացակարգ, որի թիվ 5 (գրասեղան) չափաբաժնով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ԱՁ Ազատ Հայրապետյանը ճանաչվել է ընտրված մասնակից:

Վերջինիս 2024թ. սեպտեմբերի 11-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը:

Պայմանագրի նախագիծը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում ԱՁ Ազատ Հայրապետյանը «ՀԱԷԿ» ՓԲ ընկերությանը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին, որի հետևանքով վերջինս զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, իսկ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-118/24» ծածկագրով գնման ընթացակարգը՝ 5-րդ չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվել է չկայացած:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ԱՁ Ազատ Հայրապետյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և ԱՁ Ազատ Հայրապետյանին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**